ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՀՀ Կոտայքի մարզ գ. Ջորավան 1-ին փող. 13 շ, 091-061-773, էլ. փոստ sveta_grigoryan@inbox.ru

N 4

<25 > փետրվարի 2015 թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ջորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՋՄ-ՇՀԱՊՁԲ-15/02»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջորավան 13 շ. հասցեով (մանկապարտեզի վարչական շենք), մինչև 2015թ.-ի մարտի 9-ը, ժամը 11:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Տ. Զաքարյան: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Ջորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքում, ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջորավան 13 շ. հասցեով (մանկապարտեզի վարչական շենք), 2015թ.-ի մարտի 9-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Ջորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:

«Ջորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1 ), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 2 ): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Զորավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ sveta_grigoryan@inbox.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին, ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝
Տնօրեն Ս. Գրիգորյան

Կատարող՝
Տ.Զաքարյան
094-63-50-20